

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N ----- Ա

ՎԱՀԵ ԲԱՅԱԴՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Վահե Հակոբի Բայադյանին /ծնված 1996թ. հուլիսի 13-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր-Արեշ 40 փ., տուն 27/ 2017 թվականին ընդունվել է Գերմանիայի Մյունխենի տեխնոլոգիական համալսարանի մագիստրատուրա՝ «Կառավարում» մասնագիտությամբ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2019 թվականի ծմեռային զորակոչ:

2. Ընդունել ի գիտություն, որ Վահե Բայադյանը ներկայացրել է նոտարական կարգով հաստատված հայտարարություն, որի համաձայն պարտավորվել է ուսումն ավարտելուց հետո վերադառնալ Հայաստանի Հանրապետություն և 2 տարի աշխատել իր մասնագիտությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությամբ՝ նրա կողմից առաջարկվող վայրում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Վահե Հակոբի Բայադյանը /ծնված 1996թ. հուլիսի 13-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր-Արեշ 40 փ., տուն 27/ 2017 թվականին ընդունվել է Գերմանիայի Մյունխենի տեխնոլոգիական համալսարանի մագիստրատուրա՝ «Կառավարում» մասնագիտությամբ: Ուսման տևողությունը 4 կիսամյակ է: Այն ավարտվելու է 2019 թվականի սեպտեմբերի 30-ին: Վ. Բայադյանը միաժամանակ ընդունվել է նաև Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մագիստրատուրայի անվճար համակարգ՝ տարկետման իրավունքով՝ մինչև 2019 թվականի հունիսի 21-ը:

Վ. Բայադյանը դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ խնդրելով ՀՀ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում՝ Մյունխենի տեխնոլոգիական համալսարանում ուսումը շարունակելու համար:

2. Անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Վ. Բայադյանին հնարավորություն կընձեռվի ավարտելու ուսումնառությունը, այնուհետև՝ ներկայանալու զինվորական ծառայության:

Վերոշարադրյալից ելնելով՝ նպատակահարմար է Վահե Հակոբի Բայադյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը:

3. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունումը Վ. Բայադյանին հնարավորություն կընձեռի ավարտելու կրթությունը, որից հետո նա կկարողանա ստացած գիտելիքները ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վահե Բայադյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ չի առաջացնի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վահե Բայադյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Վահե Բայադյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
<p align="center">ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p align="center">Որոշման նախագծի ընդունումը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ ՀՀ կառավարության 25.08.2011թ. N 1205-Ն որոշումը հնարավորություն է տալիս ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող անձանց ակադեմիական շարժունության ծրագրով ուսումնառության անցնել օտարերկրյա</p>	

	պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում, որը չի հանգեցնում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսման ժամկետի ավելացմանը:	
ՀՀ արդարադատության նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:	
ՀՀ Նախագահի աշխատակազմ	Դիտողություններ և առաջարկություններ չկան:	